



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2005թ. ապրիլին /վերլուծություն/

2005թ. ապրիլին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 10144 գործարքներ, որոնց քանակը 2004թ. ապրիլի համեմատ աճել է 19.6%-ով, իսկ 2005թ. մարտի համեմատ՝ նվազել 8.5%-ով:

2005թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3809 օտարման գործարքների 88.2%-ը կազմել են առուվաճառքները, 10.8%-ը՝ նվիրատվությունները և 1.0 %-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 40.7%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 40.2%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2005թ. ապրիլին, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը 2004թ. ապրիլի համեմատ աճել է 9.5 %-ով, իսկ 2005թ. մարտի համեմատ գրեթե մնացել է անփոփոխ: 2005թ. ապրիլին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 66.2%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2004թ ապրիլի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 5.4%-ով, իսկ 2005թ. մարտի համեմատ՝ 1.4%-ով:

2005թ. ապրիլին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

/1ԱՄՆ դոլարը 2005թ. ապրիլին համարժեք է 447.9.00դրամ/

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2005թ. ապրիլին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		ապրիլ 2004թ.	ապրիլ 2005թ.	մարտ 2005թ.
Կենտրոն	350.0-970.0	440.2	590.0	580
Արաբկիր	250.0-650.0	344.0	500.5	450.5
Քանաքեռ-Զեյթուն	200.0-500.0	215.2	300.8	275.0
Նոր-Նորք	200.0-400.0	179.4	270.0	249.0
Ավան	180.0-350.0	166.2	256.0	240.0
Էրեբունի	160.0-400.0	173.7	240.5	220.0
Շենգավիթ	160.0-450.0	192.5	295.2	269.0
Դավթաշեն	200.0-450.0	213.2	301.0	290.1
Աջափնյակ	200.0-450.0	189.0	285.0	259.0
Մալաթիա-Սեբաստիա	200.0-400.0	192	280.5	256.1
Նուբարաշեն	90.0-180.0	73.5	125.0	103.5
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	90.0-970.0	216.3	313.1	290.2

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. ապրիլին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 7.9% :

2005թ. ապրիլին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 402 բնակարաններ, որոնց քանակը 2004թ. ապրիլի համեմատ նվազել է 23.7%-ով, իսկ 2005թ. մարտի համեմատ՝ 12.8%-ով:

2005թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2005թ. ապրիլին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			ապրիլ 2004թ.	ապրիլ 2005թ.	մարտ 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	40.0-150.0	63.2	92.3	80.6
	Այարան	20.0-60.0	30.0	42.0	40.2
	Թալին	20.0-50.0	29.3	39.0	33.8
Արարատ	Արտաշատ	40.0-95.0	55.8	73.5	66.5
	Մասիս	40.0-95.0	57.6	80.0	68.5
	Վեդի	30.0-70.0	35.2	45.0	43.5
	Արարատ	30.0-70.0	34.1	52.2	44.2
Արմավիր	Վաղարշապատ	50.0-180.0	86.1	150.5	119.5
	Արմավիր	40.0-110.0	47.9	81.5	76.2
	Մեծամոր	20.0-60.0	31.4	43.0	36.2
Գեղարքունիք	Սևան	20.0-65.0	31.8	45.8	38.3
	Գավառ	20.0-50.0	32.5	37.5	35.2
	Մարտունի	20.0-60.0	30.0	42.0	36.8
	Վարդենիս	10.0-45.0	17.3	24.0	18.0
	Ճամբարակ	13.0-45.0	17.8	20.0	18.2
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	62.0	74.0	69.2
	Ստեփանավան	20.0-65.0	33.6	46.0	37.0
	Սյիտակ	30.0-80.0	30.1	50.0	47.8
	Ալավերդի	15.0-40.0	25.8	27.1	27.1
	Տաշիր	15.0-50.0	21.0	37.0	25.5
Կոտայք	Աբովյան	45.0-180.0	85.3	135.0	123.2
	Նոր Հաճն	50.0-120.0	57.2	95.2	83.6
	Բյուրեղավան	30.0-100.0	36.5	65.0	52.5
	Եղվարդ	35.0-100.0	42.9	80.1	61.8
	Հրազդան	30.0-100.0	34.5	54.2	54.2
	Ծաղկաձոր	40.0-150.0	75.9	109.5	95.7
	Չարենցավան	30.0-85.0	34.1	60.3	46.2
Շիրակ	Գյումրի	40.0-120.0	72.2	79.6	79.6
	Արթիկ	20.0-60.0	27.0	44.2	31.8
	Մարալիկ	18.0-50.0	25.1	35.0	28.5
Սյունիք	Գորիս	25.0-100.0	31.0	69.0	43.5
	Կապան	20.0-80.0	31.0	58.0	35.0
	Սիսիան	20.0-80.0	31.2	52.3	39.2
	Մեղրի	18.0-80.0	25.3	40.0	26.4
	Ագարակ	18.0-80.0	25.1	30.1	25.2
	Քաջարան	13.0-40.0	18.5	27.0	19.9
Վայոց Ձոր	Վայք	30.0-80.0	35.3	46.0	44.6
	Եղեգնաձոր	40.0-100.0	47.0	73.2	60.2
	Ջերմուկ	40.0-120.0	41.1	82.5	66.5
Տավուշ	Դիլիջան	30.0-80.0	36.3	59.5	47.9
	Իջևան	40.0-100.0	42.0	72.2	60.1
	Բերդ	25.0-70.0	29.3	50.2	37.4
	Նոյեմբերյան	15.0-45.0	27.2	27.7	27.7

2005թ. ապրիլին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 18.4% :

2005թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 450 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 121, մյուս մարզերում միասին վերցրած՝ 329: 2004թ. ապրիլի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 18.8%-ով, ընդ որում Երևան քաղաքում աճել է 19.8 %-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ նվազել 27.4%-ով: 2005թ. մարտի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 9.0%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 27.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 3.5%-ով:

2005թ. ապրիլին Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2005թ. ապրիլին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		ապրիլ 2004թ.	ապրիլ 2005թ.	մարտ 2005թ.
Կենտրոն	255.0-2000.0	454.3	640.4	588.3
Արաբկիր	200.0-1000.0	349.7	503.7	455.0
Քանաքեռ-Զեյթուն	150.0-600.0	216.2	304.3	278.1
Նորք-Մարաշ	200.0-1000.0	328.0	362.3	357.9
Ավան	190.0-800.0	167.0	258.8	243.2
Էրեբունի	150.0-500.0	174.7	243.7	223.9
Շենգավիթ	150.0-450.0	193.1	298.9	274.5
Դավթաշեն	200.0-900.0	215.3	307.5	293.2
Աջափնյակ	125.0-600.0	190.5	288.6	263.2
Մալաթիա-Մեքաստիա	140.0-900.0	193.1	284.4	259.6
Նուբարաշեն	80.0-200.0	74.3	128.6	106.5
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	80.0-2000.0	232.4	329.2	303.9

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. ապրիլին անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, ամսական աճը կազմել է 8.3%:

2005թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2005թ. ապրիլին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			ապրիլ 2004թ.	ապրիլ 2005թ.	մարտ 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	60.0-180.0	83.3	98.9	88.0
	Ապարան	25.0-60.0	38.9	43.7	41.6
	Թալին	20.0-65.0	30.1	40.3	35.2
Արարատ	Արտաշատ	50.0-90.0	61.9	74.9	67.3
	Մասիս	50.0-100.0	62.8	81.6	70.3
	Վեդի	30.0-70.0	36.3	50.5	49.4
	Արարատ	30.0-80.0	37.6	54.1	46.3
Արմավիր	Վաղարշապատ	80.0-180.0	90.1	152.7	121.3
	Արմավիր	50.0-100.0	52.6	83.0	77.1
Գեղարքունիք	Սևան	20.0-65.0	36.4	48.8	42.3
	Գավառ	20.0-60.0	39.9	41.6	40.1
	Մարտունի	25.0-60.0	33.9	45.5	41.1
	Վարդենիս	15.0-50.0	21.3	27.6	21.9
	Ճամբարակ	15.0-50.0	20.0	24.3	22.4
Լոռի	Վանաձոր	50.0-90.0	69.4	75.7	71.5
	Ստեփանավան	35.0-80.0	33.7	58.3	50.6
	Սպիտակ	35.0-70.0	30.5	51.9	50.2
	Ալավերդի	15.0-50.0	26.0	30.0	30.0
	Տաշիր	15.0-55.0	21.1	38.4	28.5
Կոտայք	Աբովյան	70.0-180.0	92.9	136.3	123.9
	Նոր Հաճն	40.0-120.0	55.8	98.2	86.1
	Բյուրեղավան	35.0-90.0	38.2	66.5	53.7
	Եղվարդ	50.0-100.0	47.5	82.1	63.2
	Հրազդան	35.0-80.0	40.4	58.6	58.6
	Ծաղկաձոր	70.0-150.0	85.6	115.4	103.2
	Չարենցավան	35.0-90.0	34.1	63.4	49.7
Շիրակ	Գյումրի	60.0-120.0	91.3	92.4	92.4
	Արթիկ	20.0-70.0	28.7	46.3	33.5
	Մարալիկ	25.0-50.0	25.2	36.4	29.7
Սյունիք	Գորիս	40.0-90.0	31.7	70.2	44.4
	Կապան	30.0-80.0	31.2	59.9	36.9
	Սիսիան	20.0-70.0	32.1	47.8	41.1
	Մեղրի	25.0-60.0	28.2	41.4	28.7
	Ագարակ	15.0-50.0	27.3	31.6	28.3
Վայոց Ձոր	Վայք	20.0-60.0	37.0	48.1	47.0
	Եղեգնաձոր	40.0-100.0	49.3	75.0	61.0
	Ջերմուկ	25.0-90.0	43.4	60.4	44.4
Տավուշ	Դիլիջան	30.0-90.0	39.2	68.6	58.2
	Իջևան	40.0-90.0	42.2	73.6	61.8
	Բերդ	20.0-85.0	30.9	51.4	39.0
	Նոյեմբերյան	20.0-60.0	30.8	31.1	31.1

2005թ. ապրիլին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, ամսեկան աճը կազմել է 16.5 %:

Ընդհանուր առմամբ, 2005թ. ապրիլին հանրապետությունում օտարվել են 1607.60 հա /այդ թվում՝ 18.64 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 1541.17 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 1597.06 հա հողերի /այդ թվում՝ 17.06 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 1536.10 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 8.00 հա /այդ թվում՝ 0.60 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 4.00 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են :

Հողերի առուվաճառքների առավել մեծ մակերեսներ արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1135.08հա, որից 1130.22 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2005թ. ապրիլին մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների հողերը.

ԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	7	0.45	9	1.51	0	0.00	103	10.47	19	4.63
Արագածոտն	7	17.03	0	0.00	0	0.00	64	38.86	38	4.72	0	0.00
Արարատ	114	163.26	11	1.58	1	0.23	118	52.65	76	6.93	0	0.00
Արմավիր	86	728.00	0	0.00	13	0.19	71	401.22	50	4.37	4	0.14
Գեղարքունիք	0	0.00	7	0.70	0	0.00	26	6.10	9	3.88	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	22	8.28	3	0.18	0	0.00
Կոտայք	5	21.10	21	1.74	3	0.90	107	38.41	118	11.64	1	0.01
Շիրակ	10	5.36	23	1.48	7	0.69	8	13.13	5	0.50	1	0.003
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	19	26.70	2	0.26	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	4	0.04	24	8.85	2	0.40	0	0.00
Տավուշ	0	0.00	3	0.23	0	0.00	13	6.17	4	0.20	0	0.00
Ընդամենը	222	934.75	72	6.18	37	3.56	472	600.37	410	43.55	25	4.78

2005թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են 1244 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2004թ ապրիլին՝ 854/ այդ թվում 694-ը՝ գյուղատնտեսական նշանակության /447/, 544-ը՝ բնակավայրերի /404/ և 6-ը՝ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ /3/:

2005թ. ապրիլին հողերի առուվաճառքներից 321 միավորն իրականացվել են աճուրդների միջոցով /2004թ ապրիլին՝ 147/, այդ թվում 11-ը՝ /1.27 հա/ Երևանում /13/, իսկ 310-ը՝ /942.11 հա/ մյուս մարզերում /134/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 222 միավորը /934.75 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական նշանակության /2004թ ապրիլին՝ 47/, 71-ը՝ /6.13 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /91/, 27-ը՝ /2.20 հա/ հասարակական կառուցապատման /9/ և 1-ը /0.30 հա/ արդյունաբերական օբյեկտների հողեր:

2005թ. ապրիլին հանրապետությունում արձանագրված 694 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 222-ն իրականացվել են աճուրդների և 9-ը՝ դատարանի վճիռների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	7	17.03	55.0	820.0	350.0	51	11.33	800.0	10000.0	3810.0
Ապարան								200.0	1700.0	630.0
Թալին						11	19.99	200.0	1680.0	480.0
Ծաղկահովիտ						2	7.54	170.0	2100.0	280.0
Արարատի մարզ										
Արտաշատ	82	121.95	245.0	3385.0	665.0	54	24.09	740.0	12000.0	2350.0
Մասիս	19	22.91	265.0	875.0	425.0	28	9.47	400.0	8800.0	2460.0
Վեդի	13	18.39	165.0	5710.0	2370.0	33	17.86	450.0	7200.0	1560.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	32	140.08	25.0	36810.0	1590.0	26	123.34	650.0	4650.0	1430.0
Բաղրամյան	43	568.72	45.0	800.0	170.0	15	254.05	200.0	1500.0	790.0
Վաղարշապատ	11	19.20	285.0	1585.0	1260.0	27	23.58	980.0	14000.0	2430.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								420.0	1100.0	650.0
Ճամբարակ						5	1.85	100.0	500.0	250.0
Մարտունի						21	4.25	100.0	4000.0	880.0
Սևան								100.0	1000.0	385.0
Վարդենիս								60.0	1180.0	275.0
Լոռու մարզ										
Ալավերդի						4	1.01	360.0	5500.0	810.0
Գուգարք								500.0	6000.0	1830.0
Սպիտակ						8	3.33	500.0	3300.0	1010.0
Ստեփանավան								180.0	4000.0	520.0
Տաշիր						8	2.64	100.0	400.0	320.0
Կոտայքի մարզ										
Աբովյան						45	7.00	600.0	20000.0	5650.0
Եղվարդ	4	21.00	310.0	1720.0	1030.0	48	25.50	380.0	10000.0	3900.0
Հրազդան	1	0.10	2610.0	2610.0	2610.0	14	5.91	250.0	6000.0	1150.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						2	2.07	550.0	2500.0	740.0
Ամասիա						2	1.81	80.0	525.0	200.0
Անի						2	6.39	240.0	800.0	380.0
Աշոցք								60.0	210.0	190.0
Արթիկ	10	5.36	345.0	940.0	755.0	2	2.86	140.0	800.0	270.0
Սյունիքի մարզ										
Գորիս								200.0	1600.0	590.0
Կապան								120.0	2000.0	430.0
Մեղրի						3	0.55	400.0	4240.0	880.0
Սիսիան						16	26.14	90.0	1500.0	350.0
Վայոց Ձորի մարզ										

Եղեգնաձոր						10	4.72	260.0	4000.0	2520.0
Վայք						14	4.14	120.0	3400.0	970.0
Տավուշի մարզ										
Բերդ						5	1.35	100.0	2000.0	680.0
Իջևան						2	0.22	530.0	4000.0	1600.0
Նոյեմբերյան						6	4.60	100.0	8340.0	780.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2005թ. ապրիլին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են 372 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքի գործարքներ, որից 64-ը՝ աճուրդային վաճառքներ, 1-ը՝ ուղղակի վաճառք և 1-ը՝ դատարանի վճռով գործարք:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	Նվազագույն	Առավելագույն	Միջին	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						37	45877.0	250.0	8000.0	3950.0
Ապարան								250.0	1400.0	340.0
Թալին						1	1290.0	100.0	800.0	140.0
Ծաղկահովիտ								100.0	800.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	4	4800.0	370.0	370.0	370.0	9	9720.0	300.0	6000.0	1420.0
Մասիս	5	8600.0	565.0	585.0	575.0	53	45800.0	300.0	20000.0	1680.0
Վեդի	2	2380.0	110.0	115.0	111.0	14	13780.0	250.0	2200.0	1000.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						11	12648.0	300.0	5000.0	1520.0
Բաղրամյան								180.0	600.0	230.0
Վաղարշապատ						38	30555.0	300.0	10000.0	2310.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	920.5	300.0	2000.0	650.0
Ճամբարակ	7	7000.0	250.0	270.0	265.0			100.0	300.0	160.0
Մարտունի						6	6930.0	200.0	600.0	300.0
Սևան								200.0	2000.0	260.0
Վարդենիս						1	30998.0	100.0	300.0	125.0
Լոռու մարզ										
Այվերդի								150.0	600.0	210.0
Գուգարք						1	180.0	150.0	5200.0	900.0
Սյիտակ						1	480.0	140.0	900.0	200.0
Ստեփանավան								100.0	600.0	160.0
Տաշիր						1	1130.0	100.0	300.0	135.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	1	1000.0	270.0	270.0	270.0	45	42902.0	300.0	10000.0	2780.0
Եղվարդ	2	2000.0	310.0	310.0	310.0	64	66790.0	300.0	10000.0	3050.0
Հրազդան	18	14390.0	10605.0	10610.0	10607.0	9	6728.0	300.0	8000.0	1950.0
Շիրակի մարզ										

Ախուրյան	6	1285.3	1020.0	3530.0	2415.0	4	3830.0	250.0	3400.0	520.0
Ամասիա								100.0	300.0	135.0
Անի								150.0	400.0	185.0
Աշոցք								90.0	300.0	120.0
Արթիկ	16	13170.0	155.0	1945.0	480.0	1	1200.0	150.0	900.0	240.0
Սյունիքի մարզ										
Գորիս						2	2614.0	150.0	1200.0	420.0
Կապան								150.0	1400.0	410.0
Մեղրի								150.0	900.0	230.0
Սիսիան								150.0	900.0	260.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						2	4020.0	150.0	2200.0	420.0
Վայք								170.0	1400.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	1400.0	170.0
Իջևան	3	2250.0	490.0	490.0	490.0	4	2013.0	150.0	2200.0	660.0
Նոյեմբերյան								100.0	1400.0	210.0

2005թ. ապրիլին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 12 գործարքներ 9.01 հա մակերեսով, ընդ որում 1-ը՝ Արագածոտնի /3.08հա/, 6-ը՝ Արարատի /2.29 հա/, 4-ը՝ Շիրակի /3.56 հա/ և 1-ը՝ Տավուշի /0.08 հա/ մարզերում:

2005թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1011 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.0%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 26.2%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. ապրիլի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 26.9%-ով, իսկ 2005թ. մարտի համեմատ՝ նվազել 5.5 %-ով:

2005թ. ապրիլին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 56 բնակարանների, 15 անհատական բնակելի տների, 242 հասարակական, 29 արտադրական նշանակության օբյեկտների, 666 միավոր հողերի և 3 ավտոտնակի վարձակալության գործարքներ:

2005թ. ապրիլին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 33 վարձակալության գործարքների քանակը 2004թ. ապրիլի համեմատ աճել է 23.1 %-ով, իսկ 2005թ. մարտի համեմատ՝ 33.3%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. ապրիլին հանրապետությունում վարձակալվել են 2945.94 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 3.68 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 2835.46 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 26.75 հա բնակավայրերի, 11.35 հա արդյունաբերական օբյեկտների, 51.23 հա հատուկ պահպանվող տարածքների, 11.57 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 2.40 հա էներգետիկայի օբյեկտների և 3.50 հա անտառային հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ մակերեսներ են արձանագրվել Արարատի մարզում՝ 841.13 հա, որից 830.21 հա գյուղատնտեսական նշանակության:

2005թ. ապրիլին համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1744.15 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2005թ. ապրիլին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	0	0.00	68	268.76
Արարատ	4	797.00	19	33.21
Արմավիր	0	0.00	7	24.15
Գեղարքունիք	17	178.85	34	366.18
Լոռի	2	3.30	18	31.78
Կոտայք	4	235.00	45	77.63
Շիրակ	1	30.00	63	158.06
Սյունիք	0	0.00	16	61.05
Վայոց Ձոր	0	0.00	12	20.16
Տավուշ	25	500.0	2	50.35
Ընդամենը	53	1744.15	284	1091.33

2005թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 949 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.4%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. ապրիլի համեմատ աճել է 32.4%-ով, իսկ 2005թ. մարտի համեմատ՝ 11.6%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 31.8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /40.9%/, հասարակական նշանակության օբյեկտների /15.2%/, հողերի /21.4%/ և առանձնատների /15.5%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 402 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. ապրիլի համեմատ, աճել է 5.0%-ով, իսկ 2005թ. մարտի համեմատ՝ 7.2%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. ապրիլին հանրապետությունում գրավադրվել են 836.47 հա /այդ թվում 1.92 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 832.36 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ մակերեսներ են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 709.49 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2005թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման 12ական գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.2%: 2004թ. ապրիլի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 45.5%-ով, իսկ 2005թ.մարտի համեմատ՝ 22.6%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում՝ 16.7%:

2005թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1758 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2004թ. ապրիլի համեմատ աճել է 19.2%-ով, իսկ 2005թ. մարտի համեմատ՝ 4.0%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.3%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /44.5%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն